ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ

ՆԵՐՍԻՍՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ՀՀ ՆԳՆ ոստիկանության ՀՈԳՎ Մաշտոցի բաժնի
ավագ համայնքային ոստիկան, ոստիկանության մայոր,
Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և
իրավունքի ինստիտուտի հայցորդ
DOI:10.63925/18294847-2026.blj22-09

Ամփոփագիր: Սույն հոդվածում ներկայացվում են միջնադարի հայ իրավագետների մոտեցումները, որոնք վերաբերում են ընտանեկան բռնության տարբեր դրսևորումներին: Ազգային օրենքներում առկա իրավանորմերով կարգավորում էին ամուսնաընտանեկան հարաբերությունները, պաշտպանում երեխաների, կնոջ և անօգնական ծնողի իրավունքները: Հոդվածում մանրակրկիտ ուսումնասիրվել են միջնադարյան հայ հասարակությունում առկա բռնության տեսակները՝ տարանջատված ֆիզիկականի, սեռականի, տնտեսականի, ինչպես նաև անտեսման, որոնք տվյալ ժամանակահատվածում ստացել են իրավական գնահատական: Ազգային օրենքներում առկա իրավանորմերն իրենց իրավաբանական ուժով պարտադիր բնույթ են ունեցել և դրանցից շեղումը հասարակության կողմից մերժելի ու դատապարտելի է համարվել:

Ստեղծված իրավանորմերի կիրառման նպատակն էր ապահովել ընտանիքի՝ որպես հասարակության բնական ու հիմնական բջջի հատուկ պաշտպանությունը:

Բանալի բառեր. ընտանիք, բռնության տեսակներ, անտեսում, իրավանորմ, դատապարտում, ազգային օրենք:

Ընտանիքը սոցիալական առաջին ինստիտուտն է, որտեղից սկիզբ է առնում կյանքի շարունակությունը, որը կարգավորում է հասարակության մի շարք գործառույթներ: Նրանով է պայմանավորված վերարտադրության, աճող սերնդի կրթության, դաստիարակության սոցիալականացման, նյութական ապահովության, հոգևոր կայուն զարգացման իրականացման հնարավորությունը: Այստեղ է հիմք դրվում անձի՝ որպես հասարակության լիարժեք անդամի ձևավորումն ու զարգացումը:

Սոցալական ինստիտուտ հանդիսացող ընտանիքը համարվում է հասուն, եթե առաջնորդվում է ընտանիքի անդամների նկատմամբ պատասխանատվությամբ: Ընտանիքի սոցալ-հոգեբանական հասունությունը որոշվում է ամուսինների՝ միմյանց և երեխաների նկատմամբ պատասխանատվության առկայությամբ: Երեխաների լույս աշխարհ գալու փաստը դեռ չի խոսում ընտանիքի լիարժեք լինելու մասին: Ընտանիքի ամբողջականության կամ որպես մեկ ամբոջական և արժեքավոր ինստիտուտի վերաբերյալ սոցալ-հոգեբանական մոտեցումը ենթադրում է ընտանիքի անդամների՝ միմյանց նկատմամբ պատասխանատվության առկայություն: Ընտանիքի արժեքային համակարգում գերակայում է հենց պատասխանատվության զգացումը:

Միջնադարյան հայ իրավական հուշարձաններում առկա են կնոջ, երեխայի, անօգնական ծնողի իրավունքները պաշտպանող իրավանորմեր, որոնք հիմնված են ընտանիքում նրանց իրավահավասարության, անձնիշխանության, կամքի և ընտրելու ազատության, ազատախոհության գաղափարների վրա: Հայ քաղաքական ու հոգևոր գործիչները սահմանված օրենքներով պաշտպանում էին խոցելի խմբի ներկայացուցիչների անձնական և գույքային իրավունքները, մարդկային արժանապատվությունը, կրթության ու դաստիարակության իրավունքները, միաժամանակ դատապարտում էին խոցելի խմբի ներկայացուցիչների նկատմամբ բռնությունները:

Նշենք, որ իրավական հուշարձան հասկացության տակ հասկանում ենք սովորութային նորմերի, կանոնական որոշումների կամ օրենքների համակցված գրավոր ժողովածուները /կանոնագրքեր, դատաստանագրքեր, Սահմանադրության նախագծեր/: Դրանք ներառում են 4-18-րդ դարերում հայ հասարակության մեջ տեղ գտած իրավահարաբերությունները: Աշխատությունների հիմքում հայ ժողովրդի սովորույթներն ու ավանդույթներն են, հին և նոր կտակարանները: Հայտնի միջնադարյան իրավական հուշարձաններից են՝ Դավիթ Ալավկավորդու «Կանոնագիրք հայոց»-ը, Մխիթար Գոշի «Դատաստանագիրք»-ը, Սմբատ Սպարապետի «Դատաստանագիրք»-ը: Հայ հասարակությունը միշտ լուրջ է վերաբերվել ընտանեկան արժեքներին, հատկապես ամբողջական, լիարժեք ընտանիքին՝ մեծերի և երեխաների հանդեպ հարգալից վերաբերմունքով, իսկ հայ կնոջ նկատմամբ՝ առանձնակի հարգանքով: Բայց դրան զուգահեռ կան ընտանիքում բռնության տարբեր տեսակի դրսևորումներ, ինչն էլ արձանագրված է հուշարձաններում:

Այսպես, հաշվի առնելով ընտանիքում ներդաշնակ հարաբերությունների և երեխաների բարոյահոգեբանական առողջ վիճակի կարևորությունը՝ հայ օրենսգետները հորդորում են բացառել բռնությունները կանանց ու երեխաների նկատմամբ, պաշտպանել երեխաների անվտանգությունը, ինչպես նաև չանտեսել անօգնական ծնողներին: Գոշի դատաստանագրքում հատուկ տեղ է գտել հետևյալ կանոնը. «Երբ տղամարդը մարմնական վնասվածք է պատճառում կնոջը, այրն իր կնոջը անընդհատ, հետևողականորեն անարգի, եթե խորթ կա նրանց միջև, և այդ բանի համար են իրար անարգում, ապա դատաստան լինի և պարտ է, որ այրն համբերի: Իսկ եթե առանց երկյուղ ունենալու այրն իր կնոջը հարկադրի՝ ձեռքը կոտրի կամ աչքը հանի կամ ատամը կամ ոտքը կոտրի՝ տուգանվի կրկնակի»: Հոդվածի մյուս պարբերությունում նշված է. «Եթե կինը կամենա իր այրի մոտ մնալ, և այրը զղջա իր արածի համար, տուգանքն այդժամ կնոջը տան: Իսկ եթե այրը կրկին աներկյուղ նույն կերպ կամենա վարվել իր կնոջ հետ, ապա բաժանել նրանց, որպեսզի սպանություն չլինի»[1]: Ամուսինն իրավունք չուներ մարմնական վնասվածքներ հասցնել կնոջը, հակառակ դեպքում պետք է պատժվեր այդ արարքի համար նախատեսված տուգանքի կրկնակի չափով: Եթե ամուսինը կրկներ իր արարքները տուգանվելուց հետո և վտանգեր կնոջ առողջությունը, կինն իրավունք ուներ ամուսնալուծվելու: Օրենսդիրն ընտրության հնարավորություն է տալիս կնոջը, և բռնության ենթարկված կինը կարող է ամուսնալուծվելու համար դիմել դատարան: Ամուսինը նույնիսկ կնոջ անհավատարմության դեպքում իրավունք չունի սպանել նրան: Սա վկայում է, որ կնոջ հանդեպ բռնությունը հայ իրավունքում ունեցել է հստակ դատապարտում և հիմք հանդիսացել ամուսնալուծության համար: «Եթե այրն իր կնոջն սպանում է պոռնկության համար, արյան դատաստան լինի նրան՝ լրիվությամբ, քանզի նման պարագայում Աստված պատվիրեց արձակել կնոջը և ոչ թե սպանել: Եվ եթե կինն է սպանում իր այրին դեղերով կամ այլ ցավերով, նույն դատաստանը լինի»[2]:

Մխիթար Գոշը կնոջ իրավունքների հարաբերական հավասարությունը պայմանավորել է նաև գույքային հարաբերություններով: Բացի ամուսնալուծվելուց հայ կինը կարողացել է վերադարձնել օժիտը և ապահովել իր հետագա նյութական պահանջները: Պաշտպանված էր կնոջ գույքային իրավունքը, այն խախտելու դեպքում սահմանված էր համապատասխան պատիժ: Հատկանշական է, որ Գոշն աշխարհում առաջիններից է, որ իրավական

[1] Տե՛ս Մխիթար Գոշ, Դատաստանագիրք, Երևան, 2001, գլուխ ԺԵ, էջ 53

[2] Տե՛ս Նույն տեղում, գլուխ ԺԹ, էջ 55

փաստաթղթով սահմանել է կնոջ և տղամարդու գույքային իրավահարաբերությունը: Կինն իրավունք ուներ ինքնուրույն տնօրինել իր գույքը և կտակել այն՝ ըստ իր հայեցողության: Երեխաները նրա ունեցվածքը ժառանգում էին՝ անկախ հայրական ժառանգությունից: Գոշի այս մոտեցումն այդ ժամանակաշրջանում կնոջ նկատմամբ առաջադիմական քայլ էր:

Ամուսնաընտանեկան հարաբերությունները կարգավորող կանոններ կան նաև Դավիթ Ալավկա որդու կանոններում: Կանոնական և սովորութական իրավունքի վրա հիմնված այդ կանոնները կարգավորում են ամուսնալուծության պայմաններն ու կարգը, ամուսինների փոխհարաբերությունները, ամուսնալուծության և հարակից այլ հարցեր: Ամուսնաընտանեկան կանոններում Դավիթ Ալավկա որդին արտահայտել է մի շարք առաջադիմական գաղափարներ, որոնց ակունքները հասնում են մինչև 5-րդ դար, սակայն ուսումնասիրվող դարաշրջանում և դրանից հետո այդ գաղափարները ոչ մի այն չէին կորցրել իրենց հասարակական հնչեղությունը և կենսական ուժը, այլև պահանջվում էր դրանց վերստին սանկցավորումը և օրենսդրական ամրագրումը: Ըստ Դավիթ Ալավկա որդու՝ ամուսնությունը պետք է լինի փոխադարձ համաձայնությամբ (փոխադարձ հաճութեամբ).

«... առանց հարկի տեսանի մի՛ պսակեսցէ» (հէ կանոն):[3] Հիրավի, այս նորմն իր ժամանակաշրջանի համար չափազանց առաջադիմական իրավանորմ էր, որի նշանակությունը և կարևորությունն ամուսնաընտանեկան հարաբերությունների կարգավորման բնագավառում ակնհայտ է: Ինչպես նշել ենք, հայ իրականության մեջ դա նորություն չէր: Դեռ առաջին հայ հայրապետների և եկեղեցական ժողովներում ընդունած կանոններում բազմիցս շեշտվել է, որ ամուսնությունը պետք է լինի փոխադարձ համաձայնության («հաճութիւն») հիման վրա, հակառակ դեպքում՝ այն համարվում էր անվավեր:[4]

Կնոջ և տղամարդու միջև ամուսնական հարաբերությունների հաստատումը կարևոր գրավական է իրավունքի զարգացման տեսանկյունից: Եթե ամուսնությունը տեղի էր ունենում կնոջ կամքին հակառակ, ապա համարվում էր, որ կինը հարկադրվել է ամուսնությանը, և այդպիսի ամուսնությունը համարվում էր ստիպողական, ուստի կինը կարող էր ամուսնալուծվել: Մոտեցումն ուներ սկզբունքային նշանակություն, քանզի ամուսնությունը կամովին միություն էր, և կինը չէր կարող հարկադրվել: Ինչ խոսք, հիշյալ իրավանորմը,

[3] Տե՛ս Արդարադատություն ամսագիր, Երևան, 2015, 2/29/, էջ 16

[4] /Տե՛ս Սահակ Պարթևի կանոնախմբի ԻԷ կանոն, կանոնագիրք Հայոց, Երևան, 1964, Ա, էջ 382/

ամենայն հավանականությամբ, բազմիցս ոտնահարվել է առօրյա կյանքում, հենց դա է պատճառը, որ Դավիթ Ալավկա որդին, վերստին սահմանելով այդ նորմը, կամեցել է այն բարձրացնել օրենքի աստիճանի և դրանով իսկ պարտադիր դարձնել հայ իրականության մեջ: Քրիստոնեությունն ընդհանրապես և հայ կանոնական իրավունքը մասնավորապես ամուսունությունը համարել են աստվածային հաստատություն ձևավորելու՝ ամուսինների «ցկեանս միութեան» գաղափարը. «Զոր Աստուած զուգեաց մարդ, մի մեկենեսցէ». (Մատ. ԺԹ, 6):

Աստվածաշնչի այս պատվիրանը բառացիորեն կրկնում է Դավիթ Ալավկա որդին իր Հ կանոնում. «Զի դիւահար կին չէ պարտ թողուլ, զի զոր Աստուած զուգեաց, մարդ մի մեկնեսցէ»: Ասինքն՝ կանոնագիրը նույնպես ընդունում է ամուսնության «ցկյանս միության» գաղափարը և, միաժամանակ ելնելով այդ գաղափարից, սահմանափակում է անհիմն ամուսնալությունները: Այստեղից կարելի է եզրակացնել, որ նա մեծ նշանակություն է տալիս կայուն և համերաշխ ընտանիքների գոյությանը: Ամենից առաջ այդ հանգամանքը նկատի ունի կանոնագիրը, երբ սահմանում է ամուսնության մյուս կանոնները՝ ամուսնացող զույգերը պետք է որոշակի տարիքի լինեն, այնպիսի տարիքի, որ տարբերեն իրենց «աջն ու ձախը», այսինքն՝ գիտակցեն իրենց կատարած քայլի նշանակությունը. «Այլ զփոքրագոյն մանկանս մի ոքի քահանայից յանձն առցէ հարսանեաց պսակ դնել նոցա մինչև յերկոտասան ամին, որ ճանաչեն զաջն ու զահեակն» (ԴԲ կանոն): Դավիթ Ալավկա որդին, ինչպես նշեցինք, դեմ էր անհիմն ամուսնալուծություններին: Հատկանշական է, որ նա այդ իսկ առթիվ, հետևելով կանոնական իրավունքին, չբերությունը (ամլությունը) չի համարում որպես ապահարզանի օրինական հիմք (տե՛ս Հ կանոնը)[5]:

Ակնհայտ է, որ դեռև 5-րդ դարից սկսած առաջադրված այս պահանջները չեն դադարել արդիական լինելուց, քանի որ առ այսօր էլ կանանց հանդեպ բռնությունն ու ընտանեկան բռնությունը միջազգային հանրության ուշադրության կենտրոնում է, որի վկայությունն է «Եվրոպայի խորհրդի կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» կոնվենցիան, որի վավերացման գործընթացը դեռևս շատ պետություններում ավարտին չի հասել: Հայաստանի կառավարությունն այն ստորագրել է 2017 թ. դեկտեմբերի 28-ին:

[5] Տե՛ս Արդարադատություն ամսագիր, Երևան, 2015, 2/29, էջ 16/

Օրենսգետները չեն անտեսել երեխաների կրթության ու դաստիարակության խնդիրները: Կանոնական և աշխարհիկ նորմերը ծնողներին պարտավորեցրել են զավակներին դաստիարակել Աստծո հանդեպ հավատի, հայրենասիրության, ազգասիրության ոգով:

Ծնողական հսկողության ոչ ճիշտ ընտրված մեխանիզմները, ընտանիքի անկազմակերպ և անկանոն կենցաղը նպաստում են երեխաների իրավախախտ վարքի առաջացմանը: Մասնագետները նշում են հետևյալ օրինաչափությունները. որքան ջերմ են ընտանեկան հարաբերությունները, այնքան փոքր է հավանականությունը, որ երեխայի մեջ հանցավոր վարքագիծ կձևավորվի: Առկա են այնպիսի ընտանիքներ, որտեղ ծնողներն զբաղվում են հարբեցողությամբ, անբարոյականությամբ: Երբեմն երեխաները, ընկնելով նրանց ազդեցության տակ կամ ներգրավվելով այդ միջավայրում կամ ուղղակի ենթարկվելով ճնշման, սկսում են ալկոհոլ օգտագործել, զբաղվել գողությամբ: **Դավիթ Ալավկան** áñ¹ÇÝ դատապարտում է նման վարքագիծ դրսևորող հայրերին և սահմանում համապատասխան պատիժ. «Այլ հայր մանկան գնացեալ իցէ առ գինըմպուս կամ ի գործ ինչ և մանուկ սորա անկատար դիմեալ առ հայր իւր և հեղձեալ ի գետ, զի ոչ գիտաց ի նոցանէ, անպատուհաս են վասն անգիտությանն, բայց վասն արբեցութեան, զի եղեն պատճառ կորստեան մանկանն, երիցս քառասուն պահեսցեն՝ զերկուսն սրբապահութեամբ և զմինն շաբաթապահաւք՝ Ճ /100/ ծննդրաւ, իսկ հայր մանկանն ամ մի պահեսցէ՝ զվեց ամիսն սրբապահութեամբ և զվեց շաբաթապահութեամբ ծննդրութեամբ, նույնպես և մայր մանկանն»[6]:

Առավել ուշադրության արժանի են **կրթությանը** վերաբերող կանոնները. այսպես. «Այլ քահանա, վանական կամ աշխարհական, որք զմանուկս վարձու առնուն, յուսումն, վաճառ ու գին դնեն Աստծո շնորհացն: Ձրի առեք և ձրի տուք: Բայց թէ կամավ իւրանց, պահանջելոյ մեր տան զպէտս, զի արժան է մշակն վարձոյ, այսինքն՝ կերակրոցն և ըմպելեաց, որպես Պողոս գրէ, հաղորդութուն արասցէ աշակերտն վարդապետին ամենայն բարութիւնս»»[7]: Ծնողները երեխաներին կրթության տալով կարգավորում էին երեխաների զբաղվածության և ուսման հարցը՝ դրանով իսկ շրջանցելով անտեսման փաստերը:

Սմբատ Սպարապետը նույնպես սահմանել է երեխաների վերաբերյալ կանոններ: Նրա դատաստանագրքում առկա են կանոններ որբ և աղքատ երեխաների մասին: Արգելվել են բռնություններն աշակերտների հանդեպ: Ինչպես հայրը, այնպես էլ ուսուցիչն իրավունք չուներ

[6] Տե՛ս Մատենագրական փշրանքներ, Դավիթ Ալավկա որդու կանոններ, Էջմիածին, 1952, էջ 65/

[7] Տե՛ս Մատենագրական փշրանքներ, Դավիթ Ալավկա որդու կանոններ, Էջմիածին, 1952, էջ 64

հարվածել երեխային. «Եթե վարդապետը ուսուցանելու ընթացքում աշակերտին այնպես հարվածի, որ վերջինս մահանա, նա մարդասպան է» և «...այլևս չի կարող հոգևորական լինել»»[8]: Այսպիսով՝ Սմբատը պաշտպանում է երեխաների կրթության իրավունքը և անվտանգությունը՝ պահանջելով մարդասիրական վերաբերմունք նրանց նկատմամբ:

Բռնության դրսևորումներից է նաև անտեսումը: Անտեսումը մշտապես երեխայի ֆիզիկական և հոգեբանական տարրական պահանջների չբավարարելն է, որի հետևանքը կարող է լինել երեխայի առողջության և զարգացման լուրջ վատթարացումը: Դա իր մեջ ներառում է ծնողի կամ խնամակալի կողմից անհրաժեշտ սնունդ, կացարան և հագուստ չտրամադրելը, երեխային ֆիզիկական վնասից կամ վտանգից պաշտպանելը կամ համապատասխան բժշկական օգնության կամ բուժման հնարավորություն չապահովելը: Դա կարող է նեռարել երեխայի տարրական հուզական պահանջների անտեսումը կամ դրանց չպատասխանելը: Երեխայի նկատմամբ հոգատարության բացակայությունը նույնպես դիտարկվում է որպես երեխայի հանդեպ անտեսում, որի դեպքում երեխան հայտնվում է հոգեկան և ֆիզիկական անհարմարության վիճակում այն բանի հետևանքով, որ ծնողների կողմից չեն բավարարվում նրա առաջնահերթ կարիքները:

Երեխայի անտեսումը նպաստում է այնպիսի վարքի ձևավորմանը, ինչպիսիք են՝

1) դաժան վերաբերմունք՝ դաժանություն կենդանիների, երեխաների հանդեպ, վանդալիզմ, հարձակողական վարքագիծ, ինքն իրեն վնասող վարքագիծ, հրդեհումներ.

2) սննդամթերքի գողություն կամ մուրում, շատակերություն, հացադուլ.

3) ցուցադրական զգացմունքայնություն՝ թատերականացված ելույթներ, մակերեսային գրավչություն, չտարբերակված կապվածություններ.

4) կլեպտոմանիա- կոմպուլսիվ սուտ, քրոնիկ գողություն, հիվանդագին ստախոսություն.

5) սեռական հարկադրանք՝ գայթակղող վարքագիծ կամ հագուստ.

6) պասիվություն- ագրեսիվություն՝ զիջողականություն, հարցերին պատասխանելուց հրաժարում, չարության սադրում՝ ուրիշների մոտ, հարձակողական վարքագիծ.

7) խղճի բացակայություն՝ մեղքի զգացման բացակայություն, մեղքի ժխտում կամ սեփական մեղքի ուրիշներին վերագրում[9]:

---

[8] Տե՛ս Սմբատ Սպարապետի Դատաստանագիրք, հոդ. 29, էջ 576-577

[9] Տե՛ս Մեսրոպ Մաշտոց համալսարանի լրատու, Երևան, 2015, էջ 155/

Համաձայն Ավետարանի՝ ինչպես երեխաների վերաբերյալ ծնողի հոգատարությունը ենթադրում է պարտադիր նախապայման և երեխաների հնազանդություն, այնպես էլ զավակների առումով առկա են նույնանման պարտականություններ և կան մի շարք պահանջներ: Ծնողին չարհամարհելը և նրա նկատմամբ հարգալից վերաբերմունքը, հոգածության ու խնամակալության անհրաժեշտությունը պարտադիր պայման է: Այսպես. «Որդեա՛կ, զորավի՛գ եղիր, քո հորը ծերության ժամանակ և նրան մի՛ տրտմեցրու իր կեանքի ընթացքում: Եվ եթե պակասի նրա խելքը, ների՛ր նրան, մի՛ անարգիր նրան» /Սիրաք 3:14-15/[10]: Հենց Ավետարանի այս դրույթները հաշվի առնելով՝ Մխիթար Գոշը զավակների պարտականությունները ծնողների նկատմամբ բարձրացրել է օրենքի աստիճանի՝ դարձնելով այն պարտադիր: Դատաստանագրքի ԾԷ կանոնում /Իրենց հորն ու մորը անարգողների մասին/ Գոշն անդրադառնում է իրենց հորն ու մորն անարգողներին. «Եթե որևէ մեկն անարգվի իր որդու կողմից, կամ եթե այլ անօրենություն գործեն որդիները օտարների առաջ, օրենքները անարգանքների համար հրաման են տալիս, որ հայրն իշխանություն ունի իր որդուն տանել դատավորների առաջ: Եվ եթե որդին հանձն առնի իր մեղքերը և խոստանա, որ այլևս նման բան չի անի, ապա խրատեն նրան ու արձակեն, եթե՝ ոչ, պատժվի, որովհետև, ըստ հին օրենքների, հայր և մայր անարգողներին երկճյուղ փայտից էին կախում»: Նշված արարքների համար ծնողներն իրավունք ունեին իրենց իրավունքների պաշտպանության և բարի համբավը վերականգնելու համար դիմել դատարան: Զավակների նկատմամբ կիրառվում էր համապատասխան պատիժ, հատկապես՝ եթե ծնողների հանդեպ գործողությունները կատարվել էին հասարակության առաջ, այլ անձանց ներկայությամբ: Ի լրումն՝ ԾԷ կանոնին հաջորդում է ԾԹ կանոնը /Իրենց հորն ու մորը բամբասողների մասին/, որտեղ նշվում է. «Եթե նույն գործողությունը կատարվել է **բռնությամբ**, ապա դատվեն համապատասխան կարգով»: Բռնությամբ կատարված անարգանգը կարող ենք հասկանալ ինչպես հոգեբանական, այնպես էլ ֆիզիկական և տնտեսական բռնության տեսքով: «Ով բամբասի իր հորը կամ մորը՝ մահվան ենթարկվի» /Ելք, ԻԱ-17/ Ծնողներին բամբասողների կամ նրանց հանցանքները հրապարակողների մահվան ենթարկելու մասին է ասում, իսկ ըստ մեր դատաստանների՝ ծնողների հետ բռնությամբ, անարգությամբ վարվողների կարգով դատվեն»»[11]:

---

[10]Տե՛ս Ռաֆայել Պապոյան, Արդի իրավունքի քրիստոնեական ակունքները, Էջմիածին, 2002, էջ 174

[11] Տե՛ս Մխիթար Գոշի «Դատաստանագիրք», 2001, էջ 72

Զավակների վերաբերմունքը ծնողների հանդեպ զուգահեռ է ստանում Մարդ-Աստված հարաբերություններում, և այդ զուգահեռի բաղադրամասերից մեկն այն է, որ զավակները բացի այն, որ պետք է հարգեն իրենց ծնողներին, պետք է նաև երկյուղեն ծնողներից, ինչպես կերկյուղի մարդն Աստծուց: Ինչպես մնացած հանցանքների համար սահմանված են պատիժներ, այս արարքը նույնպես դասվում է հանցանքների շարքին, և սահմանված են եղել պատիժներ: Այսինքն՝ Գոշը գտնում է, որ եթե ավետարանի տասը պատվիրանները նույնպես հայ օրենսդրության հիմքն են, ապա տասը պատվիրաններից առկա են այնպիսի պատվիրաններ, որոնց չկատարման դեպքում սահմանված են պատիժներ, օր.՝ մի՛ սպանիր, մի՛ գողացիր և այլն, ուստի այս պատվիրանը խախտելու դեպքում նույնպես պետք է սահմանվի համապատասխան պատիժ, այս դեպքում կխախտվի «Պատվի՛ր քո հորն ու մորը» պատվիրանը և այս պատվիրանից բխող կանոնները: Գոշը որպես իրավանորմ հստակ առանձնացրել է նշված իրավահարաբերությունները և սահմանել պատիժ՝ արարքին տալով համապատասխան իրավական գնահատական: Ըստ նրա՝ այս հանցանքները դիտվում են նույն հարթության վրա, և մեկից բխում է մյուսը:

Այսպիսով՝ կատարված ուսումնասիրություններից դիտվում է, որ մեր նախահայրերը և մատենագիրներն ամուր, ներդաշնակ ընտանիք էին հասկանում կնոջ, տղամարդու, երեխաների և ծնողների առողջ հարաբերությունները փոխկապակցված մեկը մյուսի հետ՝ պահպանելով ընտանիքում անդամների իրավունքները և հարգելով միմյանց արժանապատվությունը, իսկ երեխաներին կրթության տալով՝ ապահովում նրանց խնամքն ու դաստիարակությունը, պատրաստում լիարժեք և պիտանի հասարակության և հայրենիքի համար անհատներ: Առաջադիմական այդ քայլերը նշված ժամանակաշրջանի համար ապացուցում են, որ նրանք համոզված էին, որ ամուր, կայուն և Աստվածավախ ընտանիքը պետության հիմքն է: Հզոր պետություն կերտելու գաղափարի շուրջ համախմբված միջնադարյան հայ մտավորականները մատենագիրների օգնությամբ նաև այս եղանակով են պայքարել՝ ներառելով առավել մարդասիրական իրավական նորմեր համապատասխան իրավական ակտերում: Քննարկվող հարաբերությունները բարձրացրել են օրենքի աստիճանի և կիրառելի դարձրել դրանք՝ դատապարտելի դարձնելով **ընտանիքում բռնությունն իր բոլոր դրսևորումներով:**

Հետևաբար, հիմք ընդունելով քննարկվող միջնադարյան իրավական ակտերում տեղ գտած ընտանեկան բռնությանը վերաբերող իրավանորմերը՝ անհրաժեշտ է դրանք կիրառել նաև պրակտիկայում, մասնավորապես առաջարկվում է՝

- **Ուսումնական հաստատություններում համապատասխան ծրագրերի միջոցով ուսանողների և աշակերտների սերտ կապ Հայ առաքելական Սուրբ եկեղեցու և հոգևորականների հետ.**
- **Դպրոցներում դասընթացներ սեռական կրթության վերաբերյալ՝ ներգրավելով համապատասխան մասնագետների.**
- **Ոստիկանությունում մասնագիտացված ստորաբաժանումներ.**
- **Ընտանեկան բռնության հիմնախնդիրները վեր հանելու վերաբերյալ կանխարգելիչ աշխատանքներ.**
- **Տվյալ իրավիճակում հայտնված անձանց համար պետական զբաղվածության ծրագրեր՝ բարելավելու տնտեսական, ֆինանսական վիճակը:**

ПРОБЛЕМА СЕМЕЙНОГО НАСИЛИЯ В СРЕДНЕВЕКОВЫХ АРМЯНСКИХ ПРАВОВЫХ АКТАХ

НЕРСИСЯН ГАЯНЕ

Старший участковый инспектор
Маштоцкого отдела ГУОП Полиции МВД РА,
соискатель Института философии, социологии и права, майор полиции

Аннотация. В статье представлены подходы армянских правоведов Средневековья к различным проявлениям семейного насилия. Правовые нормы, закреплённые в национальных законах, регулировали брачно-семейные отношения, защищали права детей, женщин и нетрудоспособных родителей. В статье подробно исследуются виды насилия, имевшие место в средневековом армянском обществе и получившие в тот исторический период правовую оценку: физическое, сексуальное, экономическое насилие, а также пренебрежение (оставление без необходимой заботы). Правовые нормы, содержащиеся в национальных законах, носили обязательный характер, а отступление от них воспринималось обществом как недопустимое и

подлежащим осуждению. Целью применения созданных правовых норм являлось обеспечение особой защиты семьи как естественной и основной ячейки общества.
Ключевые слова: семья, виды насилия, пренебрежение, правовая норма, осуждение, национальные законы.

THE PROBLEM OF DOMESTIC VIOLENCE IN MEDIEVAL ARMENIAN LEGAL ACTS

NERSISYAN GAYANE

Senior Community Police Officer at Mashtots Station of the MDCP of Police
of the Ministry of Internal Affairs of the Republic of Armenia,
Police Major, Applicant at the Institute of Philosophy, Sociology and Law of
the National Academy of Sciences of the Republic of Armenia

Abstract. This article presents the approaches of medieval Armenian legal scholars regarding various manifestations of domestic violence. Legal norms enshrined in national laws regulated marital and family relations and protected the rights of children, women, and dependent parents. The article thoroughly examines the forms of violence in medieval Armenian society, classified as physical, sexual, economic violence, as well as neglect, all of which were subject to legal assessment during that period. The legal norms contained in national laws had binding legal force, and deviation from them was considered unacceptable and socially reprehensible.
Key words: family, types of violence, neglect, legal norm, condemnation, national law.

Օգտագործված գրականության ցանկ

1. Տե՛ս Մխիթար Գոշ, «Դատաստանագիրք», Երևան, 2001, գլուխ ԺԵ, էջ 53
2.Տե՛ս նույն տեղում, գլուխ ԺԹ, էջ 55
3. Տե՛ս Արդարադատություն ամսագիր, Երևան, 2015, 2/29/, էջ 16
4.Տե՛ս Սահակ Պարթևի կանոնախմբի ԻԷ կանոն, կանոնագիրք Հայոց, Երևան, 1964, Ա, էջ 382/
5. Տե՛ս Արդարադատություն ամսագիր, Երևան, 2015, 2/29, էջ 16/
6. Տե՛սՄատենագրական փշրանքներ, Դավիթ Ալավկա որդու կանոններ, Էջմիածին, 1952, էջ 65/
7. Տե՛ս Մատենագրական փշրանքներ, Դավիթ Ալավկա որդու կանոններ, Էջմիածին, 1952, էջ 64
8. Տե՛ս Սմբատ Սպարապետի Դատաստանագիրք, հոդ. 29, էջ 576-577
9. Տե՛ս Մեսրոպ Մաշտոց համալսարանի լրատու, 2015, էջ 155/
10. Տե՛ս Ռաֆայել Պապոյան, Արդի իրավունքի քրիատոնեական ակունքները, Էջմիածին, 2002, էջ 174
11. Տե՛ս Մխիթար Գոշի «Դատաստանագիրք» 2001, էջ 72
12. Հայաստանի պետության և իրավունքի տեսություն, Արա Ասլանյան, Երևան, Ուսումնական ձեռնարկ նուիերի համար, 2009 թ.
13. Իրավաքաղաքական մտքի պատմություն, Վահե Թորոսյան, Ուսումնական ձեռնարկ, Երևան, 2021 թ.